ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ, ԿԱՊԻ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ ԲԱԳՐԱՏ ԲԱԴԱԼՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

♦ԱՆՈՒՆԸ, ԱԶԳԱՆՈՒՆԸ

Բագրատ Բադալյան,

♦ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարի տեղակալ,

♦ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Բելգիայի Թագավորություն, քաղաք Բրյուսել, 2018թ. նոյեմբերի 19-ից 21-ը:

♦ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԵՐԸ

Եվրոպական հանձնաժողովի շարժունակության և տրանսպորտի գծով գործադիր տնօրենի տեղակալ Մայա Բարկան Մարչիչ:

♦ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Մասնակցություն ս.թ. նոյեմբերի 20-ին քաղաք Բրյուսելում կայացած «Pilot Project Expert Group meeting on Financing» խորագրով ԵՄ-Չինաստան կապակցվածության հարթակի ներքո կազմակերպված 4-րդ փորձագիտական խմբի հանդիպմանը:

♦ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐ

2018թ. նոյեմբերի 20-ին Բելգիայի Թագավորության քաղաք Բրյուսելում կայացել է «Pilot Project Expert Group meeting on Financing» խորագրով ԵՄ-Չինաստան կապակցվածության հարթակի ներքո կազմակերպված 4-րդ փորձագիտական խմբի

հանդիպումը, որին Հայաստանի Հանրապետության կողմից մասնակցել է ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարի տեղակալ Բագրատ Բաղալյանը:

Վերոնշյալ հանդիպումը հիմնականում կենտրոնացած էր ԵՄ հարևանության երկրների (Արևմտյան Բալկաններ, Արևելյան Գործընկերության երկրներ) ֆինանսավորման կարիք ունեցող ենթակառուցվածքային ծրագրերի, ինչպես նաև Եվրոպայի և Չինաստանի միջև ձևավորվող հարաբերություններում ԵՄ հարևանության երկրների դերի վրա:

Չինական կողմից հանդիպմանը մասնակցում էին Ազգային զարգացման և վերափոխման հանձնաժողովի, տրանսպորտի նախարարության, Չինական երկաթուղիների, Չինաստանի զարգացման բանկի, Չինաստանի արդյունաբերական և առևտրային բանկի, «China Construction» ընկերության և այլ ընկերությունների ու կորպորացիաների ներկայացուցիչներ:

Եվրոպական կողմից հանդիպմանը մասնակցում էին Եվրոպական հանձանժողովի ծառայությունների (DG MOVE, DG NEAR, DG ECFIN, DG GROW, DG TRADE), Եվրոպական ներդրումային բանկի, Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի, ԵՄ խթանող բանկերի (KFW/AFD/CDP) ներկայացուցիչները:

Հանդիպմանը ներկա էին նաև Համաշխարհային բանկի ներկայացուցիչները:

Հանդիպման ընթացքում տեղի է ունեցել ԵՄ անդամ-պետություններում հանրային-մասնավոր համագործակցության հաջողակ նախագծերի օրինակների շնորհանդեսը:

Անդրադարձ է կատարվել նաև գոտի և ճանապարհ նախաձեռնության և տրանսեվրոպական տրանսպորտային ցանցերի (TEN-T) միջև փոխգործակցությունը: Մասնավորապես՝ քննարկվել է տրանսեվրոպական տրանսպորտային ցանցերի ընդլայնման հարցը դեպի ԵՄ անդամ չհանդիսացող պետություններ և դրանից բխող ծրագրային առաջնահերթությունները: Չինաստանի զարգացման բանկի կողմից ներկայացվել է աջակցություն «գոտի և ճանապարհ» նախաձեռնության համար և ենթակառուցվածքային ծրագրերի համար ֆինանսական քաղաքականությունը:

Հանդիպման ընթացքում ներկայացվել են հարևանության երկրների տրանսեվրոպական ցանցերի այն ենթակառուցվածքային ծրագրերը, որոնք ֆինանսավորման կարիք ունեն: Սկզբում շնորհանդեսներով ելույթ ունեցան Արևմտյան բալկանների (Ալբանիա, Մոնտենեգրո)

ներկայացուցիչները, այնուհետև Արևելյան գործընկերության երկրների (Հայաստան, Վրաստան, Ադրբեջան, Բելառուս, Մոլդովա, Ուկրաինա) ներկայացուցիչները:

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարի տեղակալ Բագրատ Բադալյանը շնորհանդեսով ներկայացրել է Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի Տրանշ 4 Սիսիան-Քաջարան ճանապարհահատվածը և վերջինիս ֆինանսավորման երկու՝ փուլային և հաջորդական ֆինանսավորման տարբերակները:

Հանդիպման վերջում չինական կողմը ներկայացրել է եվրոպական այն ծրագրերը, որոնցում մասնակցություն է ցուցաբերվել չինական ընկերությունների կողմից և պիլոտային ծրագրերը:

♦ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ

Հանդիպման շրջանակներում ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարի տեղակալ Բագրատ Բադայլանը հանդիպումներ է ունեցել Եվրոպական ներդրումային բանկի, Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի, Համաշխարհային բանկի, չինական բանկերի ներկայացուցիչների հետ և քննարկել երկկողմ հարաբերությունները ընդլայնելու ուղիները, ենթակառուցվածքների ֆինանսավորման խնդիրներն ու դրանց լուծմանն ուղղված քայլերը, ինչպես նաև երկուստեք հետաքրքրություն ներկայացնող այլ հարցեր:

♦ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Բագրատ Բադալյան
23.11.2018թ.

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Վազգեն Սարգսյան 3/3, հեռ.՝ (37410) 590001, էլ. փոստ՝ minister@mtcit.am